

Պրոֆ. P. Kretschmer, Վիեննա՝ «Միջնդարեան յունարէնի ծրագրեալ բառագրքին» վրայ խօսեցաւ, Գրիստոսէ ետքը 300—1500 շրջանի մատենագրութիւնը հիմ առաջարկելով:

Պրոֆ. H. Grégoire, Բրիւսէլէն՝ կ'առաջարկէր Ե. մինչեւ ԺԵ. դարն իբր աւելի յարմար. բայց կը տարակուսէր գործին յաջողութենէ, եւ «cum multis lacrimis» յղացուած լատ. բառագրքին վիճակակից համարեցաւ գործը: Այս բիւզանդագէտ բեղգիացին՝ բառագրքէն աւելի օգտակար գրուածեց՝ Միջինդարու բիւզանդական պատմագիրներու թարգմանութիւնը: Յաջորդ ժամուն Պրոֆ. Grégoire խօսեցաւ «Գրիստոսէից հարձանքներու եւ Կոստանդիանոսի դարձին» վրայ:

Հունդարացի արեւելագէտ վարդապետ մը, Պրոֆ. M. Kmoskó, «Ստոյն Մեթոդեայ Տեսիլքին առեղծուածին» վրայ (6—7րդ դարէն) շատ հեղինակօրէն խօսեցաւ: Արիթ պիտի ունենայ «Հանդ. Ամսօրեայ» անդրադառնալու այդ ճառին, երբ լոյս տեսնէ սոցալ գրութեամբ, վասն զի. Մեթոդիոսի տեսիլը հայերէն թարգմանութեամբ ալ պահուած է:

2. Հատուածին մէջ 12 բանախօսներ պարզեցին կարեւոր ուսումնասիրութիւններով եւ լուսապատկերներով՝ աւելի լեզուագիտական տեսութիւններ. ինչպէս Պրոֆ. J. Scheffelowitz, Կէօլնէ՝ խօսեցաւ «Հին երանանի մէջ՝ արիական a եւ r գրերու արտասանութիւնը». եւ B. Geiger՝ «Վեդայի եւ Աւեստայի վրայ»:

Ի. Հատուածը՝ մեղի համար ամենամեծ նշանակութիւն ունէր, վասն զի պիտի խօսէր՝ քաջածանօթ հայագէտ ու հայասէր, Պրոֆ. Lehmann-Haupt եւ պիտի ճառէր շատ կարեւոր նիւթի մը վրայ. «Նախահայ Խաղիներ, Փոքրասիացիք, Էտրուսկացիք»: Լուսապատկերներու հիման վրայ՝ Գրիստոսէ 8 դար յառաջ տեղի ունեցած պատմութիւններ կը նորոգէր մեր աչքերուն առջեւ:

Պրոֆ. Կեռնըն հեղինակօրէն կը խօսէր՝ կարծես, հնադարեան էակներու հետ, անոնց պատկերները, տեղերը, գործիքները ցոյց տուած ատեն, եւ այնպիսի բամբ ճայնով, որ կը դուրսնէր լի սրահը: «Էտրուսկացիք Հայաստան եկան» խօսքովը ծափահարութեանց որսորդողս գոռումն արձակուեցաւ 4:

Երբ երիտասարդ Հելլինիստոսի Ուսուցիչն՝ A. M. Tallgreen, «Կաւկասեան պլատտիկ առարկաներու մէջ՝ ասիականաւորական տարրեր» անուամբ բանախօսու-

4 Պր. Լեման՝ հայերէն ողջունի ներկայացաւ իբր հայ ունկնդիրներուն: Ըստ բաւականի կը խօսի հայերէնը, զոր «մտացել եմ» կ'ըսէր: Համակրելի Ուսուցչապետին կ'ընկերանայ եւ Տիկինը. Սքանչանօք կը դիտէր մեր՝ Մայր-ժամբէն 100—120 տարուան ոսկեճամուկ եւ ոսկեճամ գրեթէներն եւ մանաւանդ հայ ձեռագրաց հաւաքածոյքն ու մատենագրանները:

թիւն մը կ'ընէր, եւ Կաղբեգ գտնուած շատ մը արձաններու ծագումը Փոքր-Ասիան ցոյց կու տար, եւ իբր փոխառու այս արձաններուն Հայ անունը կը յիշատակուէր, շնորհաւորեց զինքը Պրոֆ. Լեման, զըուչացնելով սակայն, որ ասոնք առ այժմ դեռ իբր ենթադրեալ կարծիքներ ընդունուին, ոչ իբր կատարուած, ստուգուած իրողութիւններ. արուած մեկնութիւններն հաւանական դատու, բայց «հայկական ազդեցութիւնը դեռ բոլորովին ապահով չէ» ըսաւ:

Պր. G. Peradze, Bonn՝ «Ջանաց Վրացերէն աւետարաններու թարգմանութեան խնդիրը» որոշել: Տաքարիւն երիտասարդն այս խնդիրը կը պարզէր եւ վրացական թարգմանութեան հիմ՝ հայկական բնագիր կ'ընդունէր:

Ը. Հատուածին մէջ՝ քանոմէկ բանախօսներ խօսեցան Չինեբու, Հնդկիկներու, Ճապոնի, Պապուա լեզուներու (Նոր Գուինէա), Աւստրալիայի լեզուներու վրայ եւն:

Չենք իջնէր մանրամասնութեանց, վասն զի անձուկ մտօք հայագիտութեան հետ անընդունելի մը չգտանք այն բանախօսութեանց մէջ եւ ժամանակը շատ կարճ էր ասոնց ալ ներկայ գտնուելու: Բայց երբ — ժամանակին — հրատարակուին այս համաժողովին տեղեկագրութիւնքը, պիտի փութանք՝ լեզուագէտներու համար կարեւոր տեղեկութիւնները քաղուածարար հաղորդել «Հանդ. Ամսօրեայ» մէջ:

Այս հաւաքումներու մէջ՝ ամենանշանաւոր Պրոֆ. Կեռնընընէն մին էր՝ «Oriens Christianus» պարբերագրին հրատարակիչն, ծերունին A. Baumstark, որուն կրնանք՝ «Կենդանի համայնագիտարան» անունն ամենայն վստահութեամբ տալ: Ամէն վիճարանութեան ու մեկնարանութեան առաջին ուղեցոյցն էր:

Երբ Բերլինի Պրոֆ. Հառնակի մահուան դոյժն առաւ, անմիջապէս յանպատրաստից դամբանական մը խօսեցաւ իւր ունկնդիրներու առջեւ՝ դրուատելով «մահուամբ մեղմէ յափշտակուողին» գոծունէութիւնն եւ գրական վաստակները, մանաւանդ «Ս. Գրոց քննութեան» մէջ, թէպէտ վերջերս Հառնակ բոլորովին օտարոտի գաղափարներու մէջ կը թափառէր՝ քրիստոնէութեան հիմնական սկզբունքներու նկատմամբ:

Մեծ համակրանօք կը խօսէր Պրոֆ. Բառնամասարի՝ Վիեննայի Միթիթարեանց վրայ՝ իբրեւ միջնորդներ արեւելագիտութեան Ասիոյ եւ Եւրոպայի միջեւ, փոփոխակի հաղորդելով երկու կողման ալ՝ գիտութեան ընձեռած լոյսն:

Երեք օրուան մէջ՝ աշխարհիս հինգ մասերն ալ ի հանդիսի ցոյց տրուեցաւ արեւելալոյսաց ժողովքին մէջ, համարատուութիւն եղաւ, այս ճիւղերուն մէջ եղած յառաջադիմութիւններու: Գնահատուեցան ու-

սուցչապետներու քրտնալից աշխատութիւններն ու ճիւղերը:

Իւրաքանչիւր հատուածին մէջ՝ երբորդ օրուան վերջին ժամուն՝ ընդհանուր շնորհակալութիւն մատուցուեցաւ, նախ՝ կազմակերպող կոմիտէին, երկրորդ՝ Վիեննա քաղաքին սրտալիք հիւրասիրութեան, երրորդ՝ մասնակցող բանախօսներու եւ չորրորդ՝ ունկնդիրներու, որոնք զիտցան իրենց քաջալերիչ ունկնդրութեամբը վարձատրելու սուցչապետներու աշխատանքը եւ ապագայ 7րդ Համաժողովին պատրաստութեան եւ յաջողութեան գործնական գրաւական մը տալ:

Հ. ՄԱՐՐՈՒԼ Ժ. Վ. ՄԵՆՆԱՆՇԵՅՍ



ՅԻՅԱՏԱԿ ԶԱՅ ԲԱՐԵՐԱՐԻՆ

(ԱՌԹԻԻ ԳՕԼՈՍ ՆՈՒԳԱՐ ՓԱՇԱՅԻ ՄԱՀՈՒՄՍ)

«Այլ իմ ցայժմ յուսով երկնային կեցեալ. բայց դուք... աւելի զարդարութենէ փոյթ զարմարութենէ փոյթ զարմարութենէ... առաւել զողորմութիւն զե... քան զողորմութիւն աննել, կամ՝ քան գոռոս տաւ, այլ ինչ մեծ եւ պատուական առաջի Աստուծոյ շնորհք... Այլ վասն իմ որ կոծ մի ղեցէ... այլ ինչ յիշատակ արասցէ որ զես սիրէ»:
Փ. Բիւզանդացի. Ե. 44:

Մեծ սպարապետն Մանուէլ Մամիկոնեան իւր մահուան անկողինին մէջ հայ ժողովրդեան ներկայացուցիչներուն, հայ ժողովրդեան ներկայացուցիչներուն, լալու որոնք հաւաքուած էին իր շուրջը, խօսեցաւ «զայս եւ զայսպիսի, եւ որ ինչ այս բանից նման են բանք»:

Ոսկի խօսքեր են Սպարապետին արտայայտութիւնները, եւ կ'արժեն ստեղծ ստեղծ յեղյեղուիլ հայ ականջներուն մէջ:

Մեծ Սպարապետի կտակը կը լսեմ՝ կրկնուած այն հայ մեծ Բարերարին բերնէն, որ հրաժարեցաւ իւր սիրելի ժողովրդենէն Յունիս 25 ին ի Պարիս:

Պօղոս Նուպար փաշան էր ան, (ծնած՝ 2. Օգոստ. 1851 ի Կ. Պոլիս), որդին մեծ Նուպար փաշային, Բարերարը հայ ժողովրդեան, Հիմնադիրը եւ նախագահը Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան:

Անոր ալ կտակը եղած էր. «վասն իմ կոծ որ մի ղիցէ... բայց դուք... առաւել զարդարութենէ փոյթ արասցիք, եւս առաւել զողորմութենէ»:

Պօղոս Նուպար փաշա հանդիսացաւ իւր բովանդակ կեանքին մէջ անզուգական հայը, որ սպրեցաւ իւր խորհուրդներովն եւ գործերովը հայ ժողովրդեան համար:

Եղաւ ան ժառանգը Մեծ Նուպարի. թէպէտ չբերաւ ի հանդէս այն հանճարը, որով պայծառացած էր քաղաքագիտական ասպարէզի վրայ իր մեծանուն հայրը, բայց գործեց իր մէջ հայրենի ոգին, ոչ ի շահ օտարին, այլ յօգուտ իւր սեպհական ժողովրդեան: Չբեւցաւ նա ղիւանագէտ, յեղավրդեան: Չբեւցաւ աշխարհի կարգերը, բայց ղրաւ ի փոխելու աշխարհի կարգերը, բայց ղրաւ ի փոխելու կարողութիւնները բարերասպաս իւր կարողութեան, նպաստաւորելու իւր ընկու մարդկութեան, նպաստաւորելու իւր Ազգին, ձգելու բարի յիշատակ պատմութեան մէջ:

Նա անմահացաւ հայ սրտերու մէջ իբրեւ բարերար եւ լաւ հայ:

Չկուանեց զէնքեր, չվառեց հայ ժողովուրդը թշնամիներու դէմ, այլ ուզեց խաղաղ ղիւանագիտական բանակցութիւններով բարելաւել իւր ժողովրդեան դատն կացութիւնը. բացաւ իւր մթերանոցները զինելու հայ միտքը զիտութեան լուսով, վառելու հայ երիտասարդութիւնը պարեան սաները կազմեցին լեզուններ, յառաջամարտիկ տնտեսական ասպարէզի վրայ:

Շրջահայեաց եւ հեռատես իւր ճանապարհին վրայ, խելամուտ եղաւ Ազգին եւ սպազայ պիտոյքներուն, եւ ներկայ

առանց վարանելու իրահամարձակ ձեռնա-
մուխ եղաւ իրագործելու բարին:

«Հայ Բարեգործական Ընդհանուր
Միութեան» հիմնարկումը պիտի համա-
խմբէր ազգային ոյժերն եւ ուղղութիւն
տար անոնց զիտակից քայլերով կանգ-
նելու, բարձրացնելու հայ ոգին իր թմրու-
թենէն, հայ տնտեսութիւնը իր անկումէն
եւ այսպէս թելաւորելու հայ արծիւը
սաւառնելու ճախրելու դէպ ի բարձունքը
ազգային քաղաքակրթութեան:

Եւ Պօղոս Նուպար փաշա եղաւ հիմնա-
դիրը այդ Հ. Բ. Ը. Միութեան (1906),
առատօրէն մաս հանելով իր հարստու-
թենէն ազգային վեմ չհիմնարկութեան:
Հիմնադրին ձեռք կարկտեցին հայ մեծա-
տունն եւ աղքատը. Միութիւնը կազմուե-
ցաւ, եւ հայ ոյժը միութեան մէջ երեւցաւ
հզօր, ընդունակ բարեգործելու ընդհանու-
րին եւ մասնաւորին, թշուառին եւ այր-
ւոյն եւ որբին: Արագութեամբ գտաւ ար-
ձագանգ բարեգործին ձայնը հայ սրտերուն
մէջ, աճեցաւ, ստուարացաւ բարերար-
ներու թիւը, ընծիւղեցան ճիւղեր քաղաք-
ներու եւ զիւղերու մէջ, ուր հայը հաստա-
տած էր իր բնակութիւնը. կազմեցին
ողորմութեան կաթիլներն առուակներ,
որոնց ամփոփումը Միութեան հողի վրայ
հոսեցուց գետեր, ողողելու, ծաղկեցնելու
ամայութիւնը, մխիթարելու վշտահար-
ները, կեանք ներշնչելու այրիներուն եւ
որբերուն: Զուարթացան հայ անդաստան-
ները, սնունդ առաւ հայ մանկտին, նիւ-
թապէս եւ բարոյսապէս հնձեց հայ ժողո-
վուրդը հայ բարեգործութեան պտուղները:

Չեռնարկութեան յաջողութիւնը եւ
բարգաւաճումը եւ օգտաւետութիւնը խրա-
խոյս առնեց ինքնին Հիմնադրին եւ Բարե-
բարը կրկնապատկեց, յաճախեց իր բա-
րեգործութիւնները աւելի առատածեռնու-
թեամբ: Զգաց հաճոյքը բարեգործութեան
մէջ. թշուառին ժպիտը եւեց իր սրտէն
զոհունակութիւն. հայրենասէր ոգին գոր-

ծեց նոր ուտումներ հայրենի առաքինու-
թեան մէջ. եւ աշխարհը լսեց հիացախառն
հռչակը նոր Հիմնարկութիւններու, նոր
բարեգործութիւններու, որոնցմով կ'օժ-
տուէր Ազգը իր աղէտի օրերուն եւ ի տես
լուսաբեր առաւօտին կը զգենուր յոյս եւ
խրախոյս: Անոնց թուին մէջ են Նու-
պարեան վարժարանն ի Հելիոպոլիս,
Հայ Ռուսակոյակի Հիմնարկութիւնն ի
Բրիւսէլ (1924), Հայաստանի Պատմո-
թեան եւ Գրականութեան միջակակ-
ները յՕքսֆորդ եւ յԵրեւան, Նուպարեան
Մատենադարանն ի Պարիս (1927),
Երեւանի Ակնարոտարանն ի յիշատակ
հանգուցեալ Տիկին Մարի Նուպարի, Հայ
Ռուսակոյակի տունն ի Պարիս եւ վեր-
ջապէս Նուպարաշէնը Հայաստանի եր-
կինքին տակ:

Ասոնք հսկայ մահարձաններ են կանգ-
նուած յանցս ճանապարհաց ի յիշատակ
Մեծ Հայրենասէրին եւ Մեծ Բարերարին,
եւ պիտի պատմեն դարերուն Պօղոս Նու-
պարի անունը:

Անոնք որ տեսան Բարերարին բարե-
գործութիւնները, անոնք որ վայելեցին եւ
պիտի ըմբռնեն անոր երախտիքները,
պիտի մասն համակուած սիրով հանդէպ
Պօղոս Նուպարի. պիտի ապրի անոնց
երախտագէտ կուրծքերու մէջ անմոռաց
յիշատակը երախտաւորին: Պիտի յար-
գուի անոր սուրբ կամբը.

«Այլ ինձ յիշատակ արասցէ որ զի՛ս
սիրէ»:

Հայ Ազգը բովանդակ՝ երախտագէտ
է իր մեծ Բարերարին:

Նաեւ «Հանդէս Ամսօրեայ» ի, խմբա-
գրութիւնը պիտի տօնակամբէ երախտա-
գէտ զգածումներով Հայ Գրականութեան
եւ Բանասիրութեան մեծ պաշտպանին
Յիշատակը, անոր, որ զիտցաւ բարձր
զնահատել հայ բանասիրական ուսմանց
կարեւորութիւնը տոհմային գրականու-
թեան բարգաւաճման համար եւ հանդի-

սացաւ քաջալեր իւր առատ նուիրատուա-
թիւններով: «Հանդէս Ամսօրեայ» իւր Բա-
նաստանակին առթիւ լոյս հանած Յիշա-
տակարանը ձօնած էր նորին վեմութեան
Պօղոս Նուպար փաշային, իբրեւ Մեկե-
նասի Հայ Բանասիրութեան:

Սէր եւ յարգանք իր Յիշատակին:

ԽՍԲ. «ՀԱՅՐԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ»:

ՊԵՏՐԻԿ ԿԻԼՊԵՆԿԵՆ՝

Հայ ժողովուրդը կ'ողբայ իւր մեծա-
սիրտ, ազնուական եւ բարերար անդամնե-
րու շարքին նաեւ Պատրիկ Կիլպէնկեանի
մահը († 12 Յունիս ի Նիւ Եորկ):

Նա սիրած էր անաղմուկ եւ լոկի ծա-
ռայել իւր Ազգին:

Պատրիկ Կիլպէնկեան, ծնած ի Թա-
լաս Կեսարիոյ 1857 ին, կը պատկանէր
Կիլպէնկեան մեծանուն Գերդաստանին,
որ վերջին դարու մէջ հանդիսացաւ հոյա-
կապ իւր հայրենասէր եւ բարեգործ ձեռ-
նարկութիւններով:

Նախ ի Կ. Պոլիս, եւ ապա (1900) ի
Նիւ Եորկ հաստատած իւր տունը, աշա-
ւորջ եւ տաղանդաւոր կառավարութեամբ
լուրջ եւ տաղանդաւոր կառավարութեամբ:
Ընդլայնեց իւր գործառնութիւնները: Զե-
ղաւ քանքարաթագոյց, այլ վեհանձնօրէն
տրամադրեց իւր մտաւոր եւ նիւթական
կարողութիւններու վրայ, միշտ ի նպաստ
Ազգին:

Ի Կ. Պոլիս գործեց երկար ժամա-
նակ իբրեւ ատենապետ Ազգային Հիւան-
դանցի Հոգաբարձութեան, իբրեւ անդամ
Ազգային Բաղադրական ժողովին, Արմաշի
Դպրեվանքին, Կենդրոնական եւ Սանասար-
եան վարժարաններու խնամակալու-
թեանց եւ այլն:

Նիւ Եորկ փոխադրուելէ յետոյ կը
տեսնենք զինքը իւր Յարութիւն եղբոր եւ
Դարակեօզեան Յղբայրներու հետ գործի

լծուած՝ ընդարձակելու եւ զօրացնելու
Հ. Բ. Ը. Միութեան Ամերիկայի ճիւղը:
Աջակցած է Ամերիկեան Ռիլիֆին:

Իբրեւ ատենապետ իր հանգուցեալ
եղբոր Կիլպէնկեանի կտակա-
կատար Հիմնարկութեան հիմնեց Սեւա-
նիկի մէջ վարժարան մը, եւ ի յիշատակ իւր
հանգուցեալ Տիկին՝ Վերժինի, Մայրանոց
մը ի Հալէպ: Առատ նուիրատուութեամբ
օժանդակեց Երուսաղէմի մէջ բացուած
Հոգեւոր Դպրանոցին:

Պատրիկ Կիլպէնկեան կը բերէր իւր
բաժինը առատածեռնօրէն առ հասարակ
ամէն հանգանակութեան, որ կը ձեռնար-
կուէր ի նպաստ Ազգին:

Իր նպաստներով լոյս տեսաւ վերջերս
Խրիմեան Հայրիկի երկերու ժողովածուն,
հրատարակուած Հայ Կրթական Հիմնար-
կութեան խնամքով:

Մեր համակարիք ցաւակցութիւնը
Հանգուցեալին գաւակներուն եւ Կիլպէն-
կեան Գերդաստանին:

ԽՍԲ. «ՀԱՅՐԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ»:

Հ. ԱՃԱՌՆԱՆ, Հայերէն Արմատական Բառարան-
Երեւան, 1926—1930 (Հրատարակութիւն Հայաս-
տանի Դ. Ս. Հանրապետութեան Պետական Հա-
մալարանի: Ապակետիւ, Թ. 10.) Հատոր Ա.—Գ.,
8^օ, էջ 1232 + 1350 + 1492:

Դարակեօզի աշխատութիւն մըն է,
գոր կը դնէ Հրատարակի վրայ Ուսուցչա-
պետի Հրաչեայ Աճառեան այս շատ համեստ
խորագրի տակ:
Աշխատութիւնս պահանջքն էր ժամա-
նակիս:

Հայ բանասիրութիւնը հիացաւ զարմա-
ցաւ, երբ 1837ին վեհեռիկի Մխիթարեան
Միաբանութիւնը՝ դիտաւոր աշխատակցու-
թեամբ երեք Հայերու, հրատարակ հա-
նցեց նոր Բաղգիրք հայկական լեզուի, եր-
կու տար հատորներու մէջ: Կատարելու-
կու ստուար հանգէս կը բերէին այդ հատոր-
թիւնը, գոր կ'ընէին համապատասխան էր այն պա-
հանջներուն, որոնց պարտադիր կ'ընէր ժա-
մանակը իւր աշխատաւորները: Դար մը ամ-
բողջ ապրեցաւ նոր բաղգիրքը. չունեցաւ